

ւորութիւններ կը ստեղծէ՝ իր երբեմնի զինուորական հմայքը դէթ մասամբ վերականգնելու համար:

Եւ միայն Գերմանիան չէ — բոլոր պետութիւնները կը զինուին, բոլորն ալ կ'աւելացընեն իրենց զինուորական բիւջէն իրենց ցամաքային ու ծովային ոյժերը: Ի՞նչ փոյթ՝ թէ ժընէպի մէջ, Ազգերու Դաշնակցութեան ծոցին՝ այն նոյն պետութիւններու ներկայացուցիչները ամիսներէ ի վեր զինաքափուքեան խնդիրը կ'արծարծեն, փայլուն, յուզիչ ճառերու մէջ. ի՞նչ փոյթ՝ թէ Հիւս. Ամերիկայի նախագահ Քուլիճ վերստին կը հրաւիրէ այդ պետութիւնները՝ նուազեցնելու իրենց ծովային սպառազինումները: Ֆրանսա եւ Իտալիա պատասխանեցին, որ չեն կրնար մասնակցիլ նոր համաժողովի մը այդ նպատակով: Հոռոմի «Մեհասջէրօ» թերթը, հաւատարիմ թարգման Մուսոլինիի մտածումներուն, հետեւեալը կը գրէր Քուլիճի հրաւերին առթիւ.

«Իտալիան չի կարող սահմանափակել իր նաւային ոյժերը, վասնզի ատիկա արգելք պիտի լինի Իտալիային՝ քալելու իր ճակատագրի գծած ուղիով»...

Աւա՛ղ, այո՛: Ամենուրեք այն զգացումը կայ — եթէ չըսենք՝ համոզումը — որ նոր պատերազմ մը անխուսափելի է: Եւ ընդհանուր վկայութեամբ, այդ վաղուան պատերազմը պիտի լինի շատ աւելի խօլական ու դաժան իր պատճառելիք զարհուրանքներով, քան երէկուանը:

«Վաղուան գերման բանակը, — կ'ըսէր Բրօքլիլլ բելջիկական Խորհրդարանում, — պիտի հրապարակ նետէ իր ամբողջ ճարտարարուեստական ոյժը, վասնզի վաղուան պատերազմը պիտի լինի ամենէն առաջ ֆարտաբարուեստական եւ ֆիմիական պատերազմ մը»...

Վաղուան ահաւոր բախումները պիտի կատարուին մասնաւոր օթօմօբիլներով ու թանքերով, օդանաւերով ու զօթաններով: Ոյժերը պիտի փոխադրուին կայծակի արագութեամբ եւ խօլական աւերածներով: Դիրքերու կռիւը պիտի անցնի յետին շարքը: Քանի մը երկիրներու մէջ — եւ անոնցմէ է Ամերիկան — կը խորհին ընդհարումի ատեն զօրաշարժի ենթարկել նաեւ կանանց: Այժմէն կը ձգտին մի-

ջոցներ հնարել՝ պաշտպանուելու օդային յարձակումներէն: Անգլիոյ մէջ, կ'ըսէ հեղինակաւոր աստրիալի սպայ մը, ամէն մէկ քաղաքացի շուտով պիտի ունենայ հովանաւորող դիմակ մը: Վասնզի դալոց օդանաւերը, իրենց ահաւոր կատարելագործման շնորհիւ, պիտի ծաւալեն պատերազմը կռուող երկիրներու ամբողջ տարածութեան վրայ, մահ ու աւերած սփռելով ամենուրեք:

Փոքրիկ երկիրները, բնականաբար, դէր չպիտի խաղան այդ տիտանեան բախումներու մէջ եւ անոնց ճակատագիրը պիտի կախուած լինի այն խոշոր պետութիւններու ճակատագրէն, որոնց անոնք յարած են քաղաքականապէս...

* * *

Այսօր արդէն լեհ-գերման յարաբերութիւնները խիստ լարուած վիճակ մ'ունին:

Եթէ օր մը պայթի կռիւը Գերմանիոյ եւ Լեհաստանի միջեւ, լեհ-Ֆրանսական դաշնակցութեան դէմ կարող են ծառանալ Ռուսաստանը, Ունգարիան, Աւստրիան, Բուլգարիան, Լիթուանիան, որոնք պատրաստ են միանալու Գերմանիային: Դա կը լինի նոր համաերոպական տակնուվրայութիւն մը, որ կարող է արձագանգներ տալ աւելի հեռուն...

Ի՞նչ է Անգլիոյ տրամադրութիւնը: Լեհական խնդիրը, ինչպէս տեսանք, լի է վտանգներով: Ահա թէ ինչու Անգլիան Լօքարնոյի մէջ ուրք չըրաւ իր անմիջական հովանաւորութեան տակ անելու Լեհաստանը. եւ վերջինը մնաց ապաւինած Ֆրանսային ու Ազգերու Լիկային: Լոնտոնի դիւանագիտութիւնը եղեր է աւանդականօրէն հակալեհ, կամ, լաւագոյն պարագային, անտարբեր դէպի Լեհաստանը, վասնզի վերջինը իր համակրանքներով միշտ թեքուած է եղեր դէպի Փարիզ:

Այժմ թափով հրապարակ կուզայ խոշոր ազդակ մը, որ կրնայ փոփոխել Անգլիոյ քաղաքականութիւնը հանդէպ լեհերու: Դա սովեւտական Ռուսաստանն է, որ ամենուրեք եւ մասնաւորապէս Մերձաւոր ու Ծայր-Արեւելքում, լայնածաւալ շարժումներ կը յարուցէ բրիտանական կայսրութեան դէմ... Օր աւուր կ'աճի Անգլիոյ մէջ հակաբոլշեակ, հակառուս տրամադրութիւնը. կ'աճի այն՝ պահպանողական ու ազատական շրջաններում, մասնաւոր-